

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՏ- ՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷջ*)

Պրոլետարիատի թշուառ տնտեսական վիճակը հասկանա-
լու և այդ վիճակի հետևանքները պատկերացնելու համար մենք
կը բերենք մի քանի վկայութիւններ և մի քանի վիճակագրա-
կան պերճախոս թուեր։

1863 թուին Անգլիայում պաշտօնական քննութիւն է նը-
շանակուած եղել աքսորի և տաժանակիր աշխատանքների դա-
տապարտուած ոճրագործների ապրուստի և մնունդի վերաբեր-
մամբ։ Քննութեան արդիւնքները տպագրել են յետոյ «Կապոյտ
գրքում»։ «Մանրազնին համեմատութիւնները,—ասուած է ի
միջն այլոց քննութեան մէջ,—անգլիական բանտերում փակ-
ուած ոճրագործների և բանտորական տներում ապրող չքաւոր-
ների ու գիւղական ազատ բառուրների ստացած մնունդների
միջն ցոյց են տալիս, որ առաջինները (ոճրագործները) ա-
ւելի լաւ են կերակրուում, քան վերջին երկու դասակար-
գերը»։

Մարքսը «Կապիտալի» մէջ բերում է Բելգիական բանտե-
րի գլխաւոր տեսուչ Ըստելաչ-ի հետևեալ պատմութիւնը։

«Ամեն մի բանտորական ընտանիք միջին թուով ունի 4 ե-
րեխայ. ուրեմն՝ ծնողներին էլ հետը հաշուելով՝ նա բաղկացած
է 6 հոգուց։ Այդ վեց հոգուց կարող են աշխատել 4-ը, եթէ
չպատահի որևէ հիւանդութիւն և այլն։ Այդ պայմաններում ըն-
տանիքի արգիւնքների մաքսիմումը կը կազմէի 1068 ֆրանկ։
Եթէ բանտուրը այնքան մնունդ ստանար, որքան նաւաստին,
նրա ընտանիքի տարեկան ծախքը կը բարձրանար մինչև 1828
ֆր., որ կը կազմէր 760 ֆր. գեֆիցիտ. որքան զինուորը, այդ
ժամանակ նրա ընտանիքի ծախքը կը բարձրանար մինչև 1473
ֆր. որ կը կազմէր 405 ֆր. դեֆիցիտ։

*) Տիւ «Մուլճ» № 5.

որքան բանտարկեալը,—այդ ժամանակ կը բարձրանար մինչև 1112 ֆր., որ կը կազմըն 54 ֆր. գեֆիցիտ։

Ուրեմն Բելգիայում ևս աղատ բանուորը աւելի վատ է ապրում քան բանտարկեալը։

«Առաջ բերած օրինակելի ընտանիքում,—շարունակում է Տսրեթիաս-ն, —միացրուած են արդիւնքի ամեն տեսակ աղբիւրներ։ Բայց բանուորական վարձ տալով ընտանիքի մօրը, մնաք զրկում ենք զրանով տունը տանտիկնողից։ Ո՞վ պէտք է հետևէ տան կարգ ու կանոնին, սպիտակեղէնը և շորը կարկատէ, կարէ և այլն։ Եւ ինչպէս են անում բանուորների մեծ մասը, որոնք ապրանքները գնում են ոչ թէ օպտով, ինչպէս բանտերում, այլ փոքրիկ մասերով։ Ինչպէս են կառավարուում նրանք, նրանք այդ կարողանում են անել շնորհիւ այն մի շարք միջոցների, որ կազմում են բանուորական ընտանիքի գաղտնիքը։ Նրանք կրնաւում են իրանց ամենօրեայ կերակրի բանակը, միս քիչ են գործածում, կամ բոլորովին չեն գործածում։ Նոյնպէս իւղը և բուսեղէնը։ Տեղաւորում են իրանց ընտանիքը մէկ կամ երկու սենեակներում, որտեղ աղջիկները և երիտասարդ տղամարդիկ ընում են միասին, յաճախ խոտէ միւնոյն տոպղակի վրայ։ Նրանք տնտեսում են իրանց շորերի և սպիտակեղէնի վրայ, զրկում են իրանց մաքրութիւնից, կիրակնօրեայ բաւականութիւններից ևայլն։ Երբ նրանք համարում են այդ սահմաններին, բաւական է լինում կենսական պիտոյշների գների աննշան բարձրանալը, որպէսզի գորէ նրանց մուրացկանների շարքերը... Ամբողջ Բելգիայում հաշւում են 930,000 ընտանիքներ։ Նրանցից, պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ 90,000 հարուստ (ընտրողական իրաւունք ունեցող) ընտանիքներ, որոնց անդամների թիւը հաւասար է 450,000-ի, 190,000 մասը միջին դասակարգի ընտանիքներ (գիւղերի և քաղաքների ազգայնակութիւննից), որոնց նշանաւոր մասը անընդհատ անցնում է պրոլետարիատի շարքերը, —ընդամենը 1,950,000 հոգի։ Վերջապէս 450,000 բանուորական ընտանիքներ, ընդամենը 2,500,000 հոգի, որոնց օրինակելի ընտանիքները ճաշակում են վերև նկարագրած բարօրութիւնը՝ 450,000 բանուորական ընտանիքներից աւելի բան 200,000-ը մտցրուած են աղքատների ցուցակներում։»

Այս նկարագրութիւնը կազմուած է մի քանի տասնեակտարի սրանից առաջ։ Շատ է փոխուել արդեօք դրանից յետոյ պրոլետարիատի դրութիւնը։ —Այդ հարցին պատասխանում են մասամբ վերև բերուած վիճակագրական տեղեկութիւնները, որ կազմուել են համեմատաբար վերջին ժամանակներս։ Բերենք Յունիս, 1905.

մի վկայութիւն ևս, որտեղ նկարագրուում է բանուուների ներկայ վիճակը Գերմանիայում: Այդ վկայութիւնը պատկանում է մի բուրժուական գրողի՝ գոկու էրնստ Թրանկէի գրչին և այդ պատճառով աւելի ևս գնահատելի է:

«Ճիշտ է, կայսրութեան հիմնուելու օրից,—ասում է Ֆըրմանկէն, —գերմանական ազգաբնակութեան նշանաւոր մասի կեանքի պայմանները և բարեկեցութիւնը բաւական բարձրացել են և այդ միջնարարական զարգացման մէջ նշանաւոր մասնակցութիւն են ունեցել իրանք ժողովրդական մասսաները, քայլ առաջադիմութիւնը ուժեղ շօշափել է մասսաների միայն վերին խաւերը: Խոկ ներքեւ, խորքերում զանոսող շերտերը ապրում են զեռ կարիքի, չըստրութեան, աղքատութեան մէջ, նրանք իջեցրուած են մինչեւ գոյութեան մինիմումը¹⁾: Նայեցէք քաղաքների աղքատ բնակարանների նկարագրութիւններին, նրանց անբարոյականացնող աղղեցութեամբ մարդու հոգու և մարմնի վրայ: Կարդացէք այն տեղեկագրերը, որտեղ պարզուած է, թէ որպիսի աղքատիկ մնունդ են ստանում իրանց բնակարաններում աշխատող բազմաթիւ բանուուներ, որոնց ստացածը հազիւ ճնարաւորութիւն է տալիս նրանց քարշ տալու իրանց գոյութիւնը: Տեսէք, թէ կարգին բանուուրական ընտանիքների բիւզէներում որքան աննշան ու ողորմելի են շորի, կօշիկէնի, ամանների և կահ-կարասիքի համար նշանակուած գումարները Պրուսիայում ընտանիքների աւագներից 700—ը ազատուած է եկամուտային հարկից, որովհետեւ այդ ընտանիքների տարեկան մուտքը 900 մարդից պակաս է: Գերմանական բանուուրների տարեկան աշխատավարձը կազմում է 600—700 մարդ: Սաքսոնիայի և Սիլեզիայի մի քանի տեղերում արհեստաւոր ոստայնանիների բազմաթիւ ընտանիքներ ամենազորմելի գոյութիւն են քարշ տալիս տարեկան 300—400 մարդով: Դերձակների մօտ աշխատող կանանց գրութիւնը, որոնք շաբաթական 6—7 մարդ են ստանուած, զեռ վատթարագոյնը չէ: Այդ տեսակ ընտանիքների բիւզէների մէջ շորի, կօշիկների, կահ կարասիքի վրայ ընկնում է հազիւ 40, 30 և մինչև խոկ 20 մարդ տարեկան: Միլիոնաւոր մարդիկ միայն մեծ տօներին ննարաւորութիւն ունին տեսնելու իրանց սեղանի վրայ իսկական մափ կտոր : Հարիւր հազարները ապրում են նեխուած, խճողուած բնակարաններում: Եւ այդ կարգի բնակարանները լցուած են հաշւում միայն այն ժամանակ, երբ ամեն մի սենեակում, ապրում են 6 հոգի, խոկ երկու սեն-

¹⁾ Ընդգծումներն մերն են.

նակից բաղկացած բնակարաններում՝ աւելի քան 10 հոգի։
Ահա թէ ինչ է ներկայացնում իրանից—բուրժուական
դրողի այս համառօտ և կցկտոր նկարագրութեան համաձայն,
—գերանական պրոլետարիատի ներկայ վիճակը։ Այդ թշուառ
տնտեսական վիճակի բնական և անխուսափելի հետևանքն է
աղդաբնակութեան մեծամասնութեան ֆիզիքական և բարոյա-
կան այլասեռումը։ Բարտկացաւը և այլ նման «պրոլետարա-
կան» կոչուող հիւանդութիւնները, որ հետևանք են տասնեակ
տարինների կիսաքաղցած գոյութեան։ Վաղաժամ մահացու-
թիւնը բանուորների մէջ քանի զնում աւելի և աւելի հրէշաւոր
չափեր է ընդունում։

Եանառնի «Համեմատական վիճակագրութեան» մէջ բերուած
են մի քանի հետազօտութիւններ, որ ձեռնարկել են վերջին
ժամանակներս եւրոպական մի շարք քաղաքաներում մահացու-
թեան աստիճանները որոշելու համար աղդաբնակութեան զա-
նազան խաւերում։

Պէշտի վիճակագրական բիւրօի հետազօտութիւնների հա-
մաձայն՝ մեռնողների միջին հասակը զանազան կարգերի աղ-
դաբնակութեան համար եղել է հետևալը։

Հաշուելով ե-	Առանց հա-
ընսաներին շուելու մին-	մինչև 5 ա.
միջին 5 ա.	չե 5 տարե-
	կան երեխ։

1 կարգի, հարուստ աղդաբնակութիւն	—38,81	50,86
2 » միջակ կարողութ. տէր աղդաբ. —23,50		44,66
3 » չքաւոր աղդաբնակութ. —14,41		41,31
4 » աղքատ աղդաբնակութ. —10,12		40,22

Ուրեմն հարուստ ապրում է միջին թուով,—եթէ ի նկա-
տի չառնենք երեխսաների մահացութիւնը,—մօտ 50 տարի, իսկ
աղքատը մօտ 40 տարի։ Իսկ եթէ հաշուենք և երեխսաներին, ո-
րոնց մէջ մահացութիւնը (եթէ մանաւանդ նրանք աղքատ են)՝
անհամեմատ աւելի ուժեղ է քան հասակաւորների մէջ, մենք
կը տեսնենք, որ աղքատի կեանքը միջին թուով համարեա 4
անգամ աւելի կարճատե է, քան հարուստինը (38, 81 և 10,
12):

Նոյն արդիւնքներն է տալիս Գերմանիայի մի քանի քա-
ղաքների վիճակագրութիւնը։ Լայպցիգում վիճակագրական բիւ-
րօն որոշել է մահացութիւնը բատ փողոցների, որ նա բաժա-
նել է երեք կարգի։ 1) փողոցներ, որտեղ ամեն մի սենեակին
միջին թուով գալիս է 1 բնակիչ (նշանակում է հարուստ փո-
ղոցներ), 2)—որտեղ ամեն մի սենեակին գալիս է երկու բնա-

կիչ (միջին կարգի փողոցներ) և 3)—ամեն մի սենեակին 3 քառակիչ (աղբատ փողոցներ):

	1000 մար-	1000 երեխա-
	դուց բոլոր յից 0 — 1	հասակները տարեկան
	վեցըրած.	հասակում
Մեռել են՝	1871—1872	1871—1872
1 կարգի փողոցներում . . .	23 18	362 268
2 « « . . .	33 22	435 333
3 « « . . .	49 30	691 500

Ուրեմն, աղբատ ազգաբնակութեան մահացութիւնը 1871 թուին (ծաղիկ հիւանդութիւն է եղել այդ տարին) 2 անգամ աւելի շատ է քան հարուստ ազգաբնակութեան, իսկ 1872: թուին 60% աւելի: Աղբատ մանուկների մահացութիւնը 71-ին 91% աւելի, 1872 թուին 90% աւելի:

Բրատունշվայգի վիճակագրութեան մէջ փողոցները բաժանուած են համաձայն բնակիչների տարեկան միջին եկամուտի: Թուերը վերաբերում են 10 տարուայ ժամանակամիջոցի, 1864-ից մինչև 1873: Այդ վիճակագրութեան համաձայն, միջին թուով, 1000 հոգուց մեռել են տարեկան—

Այն փողոցներում, որտեղ մի հոգու եկամուտը	աւելի է քան 250 տալլեր—15,2 հոգի=100-
	200—250 « —19,1 « =130-
	150—200 « —19,1 « =130-
	100—150 « —22,5 « =150-
	75—100 « —26,8 « =179-
	75ից պակաս « —34,7 « =237-

Եթէ առաջին կարգի փողոցներում մեռնողների թիւը հասասարեցնենք 100-ին, ինչպէս ցոյց է տրուած աղիւսակի մէջ, վերջին կարգի փողոցներում մեռնողների թիւը կը կազմի 237:

Վիճնանան բաժանուած է 10 քաղաքամասերի:

Առաջին քաղաքամասում, որտեղ ապրում է համար 1874—1875 թուուտ ազգաբնակութիւնը, ամեն 1000 հոգուց մեռել են՝ 13—14 Միջնակարգի քաղաքամասերում՝ 25—28:

Խ քաղաքամասում, որտեղ ապրում են բանուորական

ընտանիքներ՝ 61—43

Այդպիսով Վիճնայում աղբատ ազգաբնակութիւնը բարեյաջող տարին (1875) 3 անգամ աւելի է մեռնում, իսկ անբարեյաջող տարին (1874) մինչև իսկ 5 անգամ աւելի, քան հարուստ ազգաբնակութիւնը:

Ֆրանսիացի տնտեսագէտ Ժիտի ասելով, Պարիզում

ապրեկան մահացութիւնը, որ իջնում է հարուստ կվարդաներում մինչև 10-ը (1000 վերաբերմամբ) Մոնմարտրի կվարտալում, որտեղ ապրում են բացառապէս բանուուրները, հասնում մինչև 43: Կարելի է ուրեմն աւել, —նկատում է այդ առիթով իւանիւլովը, —որ աղքատը 4 անգամ աւելի շատ շանսեր ունի մեռնելու, քան հարուստու:

Աւելի սարսափելի կը լինի տպաւորութիւնը, եթէ մենք վերցնենք մահացութեան տարբերութիւնը էպիդիմիաների ժամանակ:

Բրառունշվայգում զանազան խաւերի մեռնողների թիւը եղել է, ըստ փողոցների, որտեղ ամեն մի բնակչի միջին տարեկան եկամուտը կազմել է՝
 250 տալ. աւելի, 200—250, 150—200 100—150 75—100, 75-ից սակաս
 Ծաղիկ հիւանդութիւնից 100 166 400 766 933 1700
 Թոքախտից 100 146 157 200 226 226
 Խօլերայից. 100 100 466 466 1000 1766

Ինչպէս տեսնում էք այս թուերից, 100 հարուստ մեռնողների դէմ թոքախտից մեռել են 226 աղքատներ, այսինքն աւելի քան 2 անգամ շատ, ծաղիկ հիւանդութիւնից 100 դէմ—1700, այսինքն 17 անգամ աւելի, և խոլերայից 100 հարուստի դէմ 1766 աղքատ, այսինքն $17\frac{1}{2}$ անգամ աւելի:

Այս թուերը միանգամբայն պարզում են բանուոր դասակարգի զարհութելի դրութիւնը և ցոյց են տալիս այն վիճը, որ բաժանում է միմեանց ներկայիս երկու հակամարտ դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարեատը:

Այդ թշուառ տնտեսական պայմանների հետեանք է նաև ալկօնուականութեան, ոճրագործութիւնների և պրոստիտոցիայի յարածուն զարգացումը, որ անագին աւերումներ է գործում բանուոր դասակարգի մէջ: Ժամանակակից անտրոպոլոգիական կրիմինալիստական դպրոցը, ի դիմաց հոչակաւոր Լոմբրոզօի, Տալնովսկու և Ֆերրերօի, ճննում էր և դեռ ճննում է հաւատացնել մարդկանց, որ ներկայ քաղաքակրթութեան այդ ըըստը մնելի արտայայտութիւնները զուտ բիօլոգիական-անտրոպոլոգիական կատեգորիաներ են, որ մարդիկ ոչ թէ դառնում են ալկօնուականներ, ոճրագործներ, պունիկներ՝ շնորհիւ այս կամ այն արտաքին պատճառների, այլ ծնւղում եմ, որպէս ալկօնուականներ, ոճրագործներ և այլն: Ներկայումս հասարակագիտական թէօրիսաները մի կողմից, և ստատիստիքական բազմաթիւ ուսումնասիրութիւնները միւս կողմից միանգամբայն պար-

զել են, որ այդ երևոյթները, իրրև լայն, մասսայական երևոյթներ, ոչ թէ բիօլոգիական այլ ընդհակառակը սոցիօլոգիական կատեգորիաներ են, որ նրանք անմիջական արդիւնք են տիրող անորմալ ու անագործյն սոցիալական կարգերի, ազգաբնակութեան անապահով, թշուառ տնտեսական վիճակի:

Ալկոհոլականութիւնը, ոճրագործութիւնը և պրոստիտուցիան միենայն պատճառների հետևանքները լինելով ամենասերտ կերպով կապուած են միմիանց հետ իրանց արտայայտութիւնների մէջ։ Ոճրագործութիւնների մեծ մասը կատարում է անմիջապէս ալկոհոլի ազդեցութեան տակ։ պրոստիտուցիան համարում է ոճրագործութեան մի որոշ տեսակը, Weibliche Erscheinungsform des Verbrecherthums—ինչպէս ասում են գերմանացիները։

Բերենք մի քանի վիճակագրական թուեր։

Գերմանիայի ազգաբնակութիւնը 1901 թուին բաղկացած է եղել 56 միլիոն հոգուց։ Այդ թուականին ամբողջ ազգաբնակութեան ծախքը կազմել է՝

Հացի համար—1700	միլիոն մարկ,	ամեն մի հոգուն միջ.	թուով—80 մարկ։
Սոխ «—2250	« « « « « «	« « « « « «	—40 «
Ռդել, խմ. «—3300	« « « « « «	« « « « « «	—58 «

Այսպիսով ալկոհոլի վրայ գերմանական ազգաբնակութիւնը համարեած անգամ աւելի է ծախսում, քան հացի վրայ։ Յայտնի է, որ ալկոհոլի գլխաւոր սպառողը պրոլետարիան է։ Նա զրկում է իրան հացից, մննդարար կերակուրներից և քանի գընում աւելի ու աւելի մեծ չափերով արտում է հարբեցողութեան։ Dr. Richard Fröhlich-ը իր «Alkoholfrage und Arbeiterklasse» գրքոյկի մէջ, մատնացոյց անելով այն պայմանները, որ մղում են պրոլետարիատին ալկոհոլականութեան գիրիլը, վերջացնում է իր խօսքը հետևեալ տողերով։ «Օրինակները օրինակների յետելից գալիս են մեզ ապացուցանելու, թէ որչափով պէտք է «սոցիալական յարաբերութիւնների» մէջ փնտուել ալկոհոլականութեան գլխաւոր արմատը։ Ով աչքի առաջ ունի բանուրների վարձատրութեան և բնակարանային պայմանները, նրանց մսուելու եղանակը, թշուառութեան ամբողջ ստորացուցիչ գերը, թշուառութեան, որ չնորհիւ մեր հասարակական կարգերի թագաւորում է բոլոր խաւերում իշնելով մինչև գիւղական բանուերի անամսական գոյութեան պայմանները և տընային արհեստաւորի մահացուցիչ վիճակը, —ով այդ բոլորը գիտէ, նա կարող է միայն զարմանալ, որ մարդիկ դեռ աւելի շատ չեն գործածում ալկոհոլը, որպէսզի մոռացութեան տան

իրանց, որպէս զի չտեսնեն և չզգան իրանց ամբողջ թշուառութիւնը»:

Ալկոհոլականութեան հետեանքները յայտնի են—ամեն տեսակ հիւանդութիւններ, խելազարութիւն, վաղաժամ մահ, ոճրագործութիւններ և այլն։

1892—94 թ. թ. գերմանական հիւանդանոցներում մեռել են 35,736 ալկոհոլիկներ և 4,454 ալկոհոլից խելազարուածներ¹⁾:

Անգլիայում ինքնասավանների 300/օ-ը (իսկ Ռուսաստանում նոյնիսկ 380/օ-ը) եղել են ալկոհոլիկներ։

Ալկոհոլից խելազարուածների թիւը Գերմանիայում և Աւստրիայում կազմում է 250/օ, իսկ Ֆրանսիայում մինչև իսկ 400/օ։

1876 թ. Գերմանիայում պատահական ոճիրների (Gelegenheitsverbrechen) թիւը, որ գործուել են ալկոհոլի ազդեցութեան տակ կազմել է 41,70/օ, 1795 և 96 թ., Վիեննայում, բանտարկութեան ընդհանուր ժամանակամիջոցից, որին դատապարտուել են բոլոր ոճրագործները, — 294 տարի, 6 ամիս և 8 օր գալիս է այն դէպքերին, երբ ոճրագործութիւնը կատարուել է ալկոհոլի ամսմիջական ազդեցութեան տակ, Դա կազմում է ընդհանուր ժամանակամիջոցի 650/օ²⁾։

Պրոստիտուցիայի և ոճրագործութիւնների քանակի մէջ եղած կազմը ցոյց են տալիս հետեւալ թուերը։

Անգլիայում 1858 թուից մինչև 1864-ը կին ոճրագործների թիւը կազմել է 377,000 հոգի։ Դրանցից 209,000-ը, այսինքն 600/օ-ը եղել են հասարակական կանայք։ 1843-ից մինչև 1854-ը, 12 տարուայ ժամանակամիջոցում, գողութիւններ ընդհանուր թուից 360/օ-ից աւելին կատարել են հասարակական կանայք։

Այդպէս սերտ կերպով կապուած են միմեանց հետ ժամանակակից քաղաքակրթութեան այդ երեք անտիպոտները—ալկոհոլականութիւնը, պրոստիտուցիան և ոճրագործութիւնը։ Դառնանը նրանց պատճառներին։

«Ոճրագործութիւնը աւելի յաճախ պատահում է ստորին, քան բարձր դասակարգերում,—ասում է պրոֆ. Մայո Սմիտը³⁾ և ամեն տարուայ ոճրագործների նշանաւոր քանակը մատակարարում են ստորին դասակարգերը։»

1) Brockhaus, B. I, Alkoholismus.

2) Paul Hirsch.—«Verbrechen und Prostitution.»

3) Майо Смить. «Статистика и социология», стр. 240, пуд. 1901 г.

Յայտնի է, որ ոճիրների ամենամեծ քանակը գործւում է սեփականութեան դէմ (գողովթիւն, կողոպուտ, բանութիւն ու սպանութիւն այդ նազատակով և այլն): Եւ այդ ոճիրներից 94, 40/0-ը ընկնում է չբաւոր դաշակարգերի վրայ:

Նոյն բանը աւելի որոշ կերպով մենք տեսնում ենք պրոստիտուցիայի վերաբերմամբ: Բոլոր երկների և բոլոր ժամանակների վիճակագրութիւնները ցոյց են տալիս, որ պոռնիկների համարեա 100% (այսինքն համարեա բոլորը) չքաւոր դասակարգից են և որ բոլորը վիճում են այդ գժբախտ արհեստին հարկագրուած իրանց չքաւորութիւնից: Օրինակի համար կարելի է յիշել 1855 թուին, 1873 թուին և 1898 թուին Գերմանիայում կատարուած վիճակագրութիւնները: ¹⁾ Բաւական պերճախօս է այդ կողմից Փարիզում կատարուած մի վիճակագրութիւն 5000 պոռնիկների վերաբերմամբ: Դրանցից 1440-ի համար պոռնիկութիւնը արդիւնք է եղել չունեմոր և դրժաղող վիճակի: 1250 հոգի բոլորովին զուրկ են եղել ծնողներից և նիւթական միջոցներից: 230 հոգի գործադրելիս են եղել այդ արհեստը, որպէսզի կերակրեն իրանց աղքատ ծնողներին: 1400 հոգի եղել են ամուսնաթող (տղամարդկանց կողմից) կանայք, կարօտ ապրուստի միջոցների: 400 հոգի զանազան կողմերից սպաների և զինուորների միջոցով Պարիզ բերուած աղջիկներ են եղել, որոնք գժբախտանալուց յետոյ, ապրուստի միակ միջոցը անառակութիւնն են դարձրել: Վերջապէս մնացած 280 հոգին եղել են՝ յդի ժամանակ իրանց սիրահարներից թողնուած աղջիկներ:

1871—72 թուականներին Բերլինում արձանագրուած
2224 պոռնիկներ եղել են իրանց ծագումով

1015 հոգի՝ 47,90% — արհեստաւորական շրջանից

467 « — 22,0% — գործարանային բանուորների շրջ.

305 « — 14,4% — փոքրաստիճան ծառայողների «

222 « — 10,40% — միջին կարգի « «

87 « — 4,10% — գիւղական « «

26 « — 1,20% — զինուորական « «

Մնացած 102 աղջիկների ծագումը չէ իմացուել: ²⁾

Այս տիպիքական աղիւսակը մեզ ցոյց է տալիս, որ պոռնիկների ամենամեծ տոկոսը տալիս են՝ 1) արհեստաւոր բանուորները, որոնց վիճակը ամենավատթարն է պրոլետարիա-

¹⁾ Տես Dr. Alfred Blaschko, «Prostitution im 19. Jahrhundert.»

²⁾ August Bebel.—Die Frau und der Sozialismus, J. 176.

կամ բոլոր խաւերից, և 2) գործարանային, կամ ինտուստրիական բանուուրները:

Պոռնկութեան և «սոցիալական միջավայրի» մէջ եղած կապը պարզ կարելի է դիտել անտեսական կրիզիսների ժամանակ:

1875 թուից մինչև 1878-ի ժամանակամիջոցը յայտնի է Գերմանիայում իբրև արդիմարերութեան անկման շրջան, որ շարունակում է մինչև 82 թուականը: Իսկ 82-ից սկսում է արդիմարերութեան ծաղկման շրջանը, որ տևում է մինչև 1885 թիւը: Այդ ժամանակամիջոցներում Բերլինի պոռնիկների ցուցակները, ներկացնում են հետեւալ պատկերը:¹⁾

ԲԵՐԼԻՆԻ ՇՆԱԿԻՀՆԵՐԻ ԹԻՒԸ	ՌԱՄԱՆԱԿԱՆ ԱԿՏՈՒԹԵԱՆ ՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ	ՌԱՄԱՆԱԿԱՆ ԱԿՏՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ	ԱՊԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ 100,000-Ից ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ԹԻՒԸ ՀԱՅԱՍՏԱՐ Է
1875	964,538	2241	232
1876	995,699	2386	242
1877	1,024,193	2547	248
1878	1,054,701	2767	262
1882	1,196,205	3900	326
1883	1,232,716	3769	306
1884	1,271,677	3724	293
1885	1,315,610	3598	273

Այդպիսով 1875-ից մինչև 1878-ը անտեսական կրիզիսի ժամանակամիջոցում, երբ կենսական մթերքների գները բարձրացած և աշխատավարձի չափը ընկած է եղել, պոռնիկների թիւը հետզհետէ աւելացել է: Իսկ 1882-ից մինչև 1885-ը, երբ մթերքները սկսել են էժանանալ և աշխատավարձը բարձրացել է, պոռնիկների թիւը սկսել է ընկնիլ:

1886 և 1887 թուականներին հացը, կարտոֆիլը և միսը յանկարծ սաստիկ էժանացել են և պոռնիկների թիւը մօտ 600-ով միանգամից պակասել է:

«Նոյն թուերը,—ասում է Պառւլ Հիբրը,—մենք տեսնում ենք ամեն տեղ: Ծնֆիէի ասելով, լոնդոնի ոստիկանական ստատիստիկան ցոյց է տալիս նոյնալէս, որ պոռնիկների թուի

¹⁾ Paul Hirsch.

բարձրանալը կամ ընկնելը սերտ կերպով կապուած է հացի-
գնի բարձրանալու և ընկնելու հետո:

Ճիշտ միենոյն բանը,—աւելացնենք այսոտեղ, —մինք տես-
նում ենք և ոճրագործութիւնների վերաբերմամբ 1875 թուին,
կրիզիսի սկզբում, կարգապահ ոստիկանութեան (Ordnungspolizei)
կողմից պատժուել են 16,218 ոճրագործներ. 1878 թուին, կրի-
զիսի վերջում, նրանց թիւը հասել է 22,624-ի. 1882-ին, երբ
արդինաբերութիւնը սկսել է ծաղկել, ոճրագործների թիւը
եղել է 22,765, և հետզհետէ ընկնելով, 1885-ին հասել է մին-
չև 18,856:

1845 և 1846 թուականներին Բելգիայում և Ֆրանսիայում
սով է տիրել: 1845 թուին, Բելգիայում, երդուեանների դա-
տարանը սեփականութեան դէմ գործուած ոճիրների համար
դատապարտել է 275 հոգու. 1846 և 47 թուականներին այդ
թիւը հասել է 498-ի. Իսկ 1850 թուին, երբ սովի ազգեցու-
թիւնը արդէն վերջացած է եղել, այդ թիւը ընկնում է մինչև
168:

Ֆրանսիայում 1845-ին դատապարտուել են 3798 հոգի,
1846-ին—4063 հոգի, 1847-ին—4580 հոգի. Իսկ 1848-ին, սովը
վերջանալուց յետոյ, այդ թիւը ընկնում է մինչև 3287:

Սյս թուերը պարզապէս ցոյց են տալիս թէ, որպիսի սերտ-
կապ կայ կենասական պիտոյքների գների բարձրութեան, կամ
առհասարակ մարդկանց տնտեսական վիճակի և ոճրագործու-
թիւնների թուի մէջ: Արժէ յիշատակել այսոտեղ և այն նշանա-
ւոր պատմական փաստը, որ 1871 թուին, կոմմունայի ժամա-
նակ, երբ ապագայի աղատ պիտութիւնը, առուպի նման,
կարծ ժամանակով շողացել է Եւրոպայի հորիզոնի վրայ Պա-
րիզում, երեք ամսուայ ընթացքում տեղի չի ունեցել ոչ մի
գողութիւն, ոչ մի ոճրագործութիւն:

Դառնանք պոռնիկութեան խնդրին:

Պոռնիկութիւնը, ինչպէս յայտնի է, քանի գնում աւելի-
ու աւելի հրէշաւոր չափեր է ընդունում:

Լոնդոնում գտնուած պոռնիկանոցների թիւը 19 դարու
կիսում կազմել է 5000, իսկ պոռնիկների թիւը մոտ 80,000-
Ներկայումս, ուրեմն, հազիր 50 տարի անցած, այդ թուերը կրկ-
սապատկուել են. պոռնիկանոցների թիւը այժմ հաւասար է
10,000-ի, իսկ պոռնիկների թիւը 150,000: Բերլինում պոռնիկ-
ների թիւը ներկայումս 50,000-ից աւելի է, իսկ Պարիզում
նա կազմում է 120,000: Բնորոշ է ժամանակակից կարգերի

համար, որ պըոստիտուցիան ինչպէս ցոյց է տալիս վիճակագրութիւնը աւելի արագ է աճում քան ընդհանուր ազգաբնակութիւնը. մասնաւորապէս Բերլինում, վերջին 20 տարուայ ընթացքում, նա երկու անգամ աւելի արագ է աճել քան Բերլինի բնակչիների թիւը:

Ի՞նչու է այդպէս աճում պոռնկութիւնը և ովկ է այդքան պոռնիկների «սպասողը»:—Այն միլիօնաւոր մարդիկ, որոնք հնարաւորութիւն չեն ունենում շնորհիւ գոյութեան կոռուֆանրութեան ներկայ հասարակութեան մէջ ամուսնանալու, կամ «ազատ սիրոյ» միջոցով բաւարարութիւն տալու իրանց սեռական պահանջներին:

1895 թուին, Բերլինում, ամուսնացած մարդկանց թիւը եղել է 468,000, իսկ ամուրիների թիւը (18 տարեկանից մինչև 50 տարեկան հասակում)՝ 451,000 հոգի: Ահա այդ լեգիօների պահանջին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ են պոռնիկների տասնեակ հազարները: Ժամանակակից տնտեսական անհաւասարութիւնը, ազգաբնակութեան մեծամասնութեան անսապահովութիւնը և աղքատութիւնը մի կողմից ստեղծում են տղամարդկանց այդ լէգիօնները որոնց համար անհրաժեշտ է օգտուել պոռնկութիւնից. միւս կողմից կանանց ահագին ըազմութիւններ, որոնք իրանց գոյութիւնը պահպանելու համար հարկադրուած են դիմել պոռնկութեան: Հաստատուած է նոյնիսկ պետական վիճակագրութեամբ (Գերմանիայում), որ արդիւնաբերութեան բազմաթիւ ճիշերում կանանց ստայց վարձատրութիւնը այնքան քիչ է, որ նրանք չէին կարողանայ ապրել, եթէ բացի իրանց աշխատանքի ոյժը ծախելուց, չծախէին նաև իրանց մարմինները:

«Պըոստիտուցիան,—ասում է Բերէլը, իր վերև յիշուած աշխատութեան մէջ,—դարձել է բուրժուական հասարակութեան համար այնպիսի մի անհրաժեշտ սոցիալական հաստատութիւն, ինչպէս ոստիկանութիւնը, զօրքը, եկեղեցին և այլն:» Նոյն միտքը արտայայտում է և Կարլ Կառլցին. «Պըոստիտուցիան, պատմում է նա, նոյնքան հին երևոյթ է, որքան հարստութիւնը և աղքատութիւնը, Բայց առաջ պոռնիկները մի տեսակ միջին տեղն էին բռնում մուրացկանների և գողերի վերաբերմամբ: Նրանք լուքսուսի (շքեղութեան) առարկաներ էին, որ հասարակութիւնը կարող էր իրան թոյլ տալ բայց որից զրկուելը երբէք չէր սպառնայ նրա գոյութեանը: Այժմ աղքատները և անգործները չեն միայն, որ ստիպուած են ծախել իրանց մարմինները, այլ և աշխատաւոր կանայք: Պըոստիտուցիան այժմ լուքսուս չէ: Նա դարձել է արդիւնաբերութեան զարգացման

հիմքերից մէկը՝ Կապիտալիստական արդիւնագործութեան տիրապետութեան օրով, պրոստիտուցիան դառնումէ հասարակութեան նեցուկներից մէկը:

Այդքան հրեշտոր չափեր ու ձեռք են ընդունում մեզ զբաղեցնող պոռնկութիւնը, ոճրագործութիւնները: Եւ այդ բոլորը, ինչպէս տեսանք, իր ամբողջ գիշատիչ ու մահասփիւռ ծանրութեամբ ընկնում է պրոլետարիատի վրայ:

Այդքան սոսկալի է ներկայ հասարակութեան մեծամասնութիւնը կազմող սեփականազուրկ ու չքաւոր դասակարգի վիճակը:

Այս, սոսկալի է այդ վիճակը, բայց բարեթաղբարար, պէտք է աւելացնենք մենք, յուսահատական չէ:

Պատմութիւնը երբէք տեղիք և իրաւունք չի տալիս իրան ճշմարիտ ըմբռնողներին, յոռետես լինելու իր վերաբերմամբ: Ստեղծելով իր զարգացման ընթացքում որոշ անհրաժեշտ ու անխուսափելի չարիքներ, նա միևնույն ժամանակ կուռմ-կոփում է այն զէնքերը, որ պէտք է հարուածեն ու վերացնեն այդ չարիքները, ճանապարհ հարթելով մարդկութեան ազատ ու յաղթական առաջադիմութեան համար:

Թէ որոնք են այդ փրկարար զէնքերը, այս մասին մենք չենք կարող խօսել ներկայ յօդուածում: Ինչպէս նկատել էինք սկզբում, մենք վերցնում ենք այստեղ ինդրի միայն մի կողմը, —պրոլետարիատի ծագման և նրա վիճակի, նրա գոյութեան նիւթական պայմանների նկարագրութիւնը:

Սակայն մի երկու խօսք ևս:

Բուրժուատ գիտնականներից շատերը և մինչեւ անգամ պրոլետարական իտէօլոգներից ոմանք թերնշտէյն և ընկ. վերջին ժամանակներս շատ լաւատես են դարձել պրոլետարիատի դրութեան վերաբերմամբ: Ոչ ոք նրանցից չի ուրանում ի հարկէ, որ այդ գրութիւնը սարսափելի է ներկայումս, բայց, ասում են, քանի զնում նա նկատելի կերպով լաւանում է: Ճիշտ է արգեօք այդ: Այս հարցին մենք պատասխանեցինք վերև բերած վիճակագրական թուերով և նկարագրութիւններով: Մենք տեսանք, որ ազգաբնակութեան ահագին մասսաները հետզհետէ անցնում են ոլրունտարեատի շարքերը, որ յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով, ինչպէս գիտենք, բանուորոների շահագործութեան աստիճանը քանի գնում աւելի ու աւելի բարձրանում է, որ ալկոհոլականութիւնը, ոճրագործութիւնները, պրոստիտուցիան և գրանց հետ կապուած հիւան-

տութիւնները, մահացութիւնը քանի գնում աւելի ու աւելի մեծ չափեր են ընդունում:

Անկասկած ճիշտ է, որ բանուորները շնորհիւ իրանց կաղմակերպութիւնների և իրանց պրոֆեսսիօննել կոուի կարողացել են ստիպել կապիտալիստներին որոշ չափով լաւացնել իրանց աշխատանքի պայմանները, աւելացնել աշխատավարձը և այլն: Ճիշտ է և այս, որ նրանց քաղաքական կուսակցութիւնը, իր պարլամենտական կռուով, կարողացել է հարկադրել կառավարութիւններին միջամտել կապիտալի և աշխատանքի յարարելութիւնների՝ մէջ և մի շարք օրէնքներ հրատարակել բանուորների օգտին: Բայց թէ այդ փոքրիկ, անմիջական տնտեսական նուաճումները և թէ ամբողջ նորագոյն ռազմիաւական օրէնսդրութիւնը անկարող են որ և է էական ու աշը ըի ընկցող փոփոխութիւն մտցնել պրոլիտարեատի վիճակի մէջ: Նրանք աննշան կաթիւներ են: Թշուառութեան այն ովկիանոսում, որ ներկայացնում է իրանից բանուոր դասակարգի դրութիւնը...

Ս. Շ.